Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Անուշվանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Ուսուցչի օգնական

Թեմա՝ Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց

Վերապատրաստող / մենթոր՝ Նարինե Սուքիասյան

Ուսուցչուհի Ռոզա Մաթևոսյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն_____ 3

Գրական ակնարկ_____ 5

Փորձարարական հետազոտություն_____11

Խմբի նկարագիր_____12

Հետազոտության ընթացք_____ 12

Փորձարարական դաս 1_____12

Փորձարարական դաս 2_____ 13

Տվյալների մշակում և վերլուծություն_____14

Եզրակացություն_____15

Օգրագործված գրականության ցանկ_____16

Ներածություն

«Առանց խաղի չկա և չի կարող լինել ամբողջական մտավոր զարգացում: Խաղը մի մեծ , լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգևոր աշխարհը , կյանքը լցնում է պնդումների, գաղափարների հոսքով: Խաղը կայծ է՝ հարցասիրության և հետաքրքրասիրության վառվող կրակ»: Վ.Ա. Սուխոմլինսկի

Յուրաքանչյուր դպրոց և մանկավարժական կոլեկտիվ պարտավոր են յուրահատուկ պայմաններ ստեղծել աշակերտների ուսուցման և դաստիարակության համար: Դա առավելապես վերաբերում է տարրական դպրոցի աշակերտներին: Համոզված եմ , որ մեր երկրում տարրական ուսուցման մանկավարժությունը հագեցած է երեխաների հանդեպ իսկական սիրով, դաստիարակության մեթոդիկան կառուցվում է մարդասիրական հիմքերի վրա՝ ապահովելով երեխայի լիարժեք մանկությունը, զարգացնելով ճանաչողական հետաքրքրությունները:Ճանաչողական հետաքրքրությունների համար խթան կարող են դառնալ

1.ուսուցումը հետաքրքիր դարձնելը,

2. ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը,

ինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը: Այդպիսի հնար է խաղը, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Բոլոր ժամանակներում էլ երեխաները ձգտել են խաղալ... Այն ինքնարտահայտման, ինքնակատարելագործման, աշխարհը և իրենք իրենց ճանաչելու հրաշալի միջոց է: Խաղերը նպաստում են երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Յուրաքանչյուր խաղ միաժամանակ զարգացնում է կարողությունների մի ամբողջ խումբ: Հաճախ դժվար է հստակ որոշել, թե որ խաղը առավելապես ինչ որակներ է ձևավորում և զարգացնում խաղացողների մեջ: Խաղը մասնակիցներից պահանջում է տրամաբանություն, ուշադրության կենտրոնացում, երևակայության դրսևորում, համբերատարություն, հումորի զգացում, ճարպկություն, արագաշարժություն... Այդ

որակների ձևավորման համար ոչ խաղային պայմաններում պահանջվում են բավականաչափ երկար ժամանակ և մեծ ջանքեր: Խաղալիս երեխաները հայտնվում են տարբեր իրադրություններում, ստանձնում են տարբեր դերեր, հաղթահարում են բազմաթիվ արգելքներ և անում են դա հաճույքով,մեծ բավականությամբ: Չէ՞ որ խաղալիս իրենք միասին են, կողք կողքի, օգնում են իրար և մասին հաղթահարում բոլորդժվարությունները

Խաղը հոգնածությունն ու լարվածությունը թոթափելու, երեխայի հոգեբանական խնդիրները լուծելու անփոխարինելի միջոց է: Եթե երեխան խաղում է տարբեր մարդկանց հետ և ոչ թե մեկ, այլ բազմապիսի խաղեր, նա ինքնավերլուծության մեծ հնարավորություն է ստանում, իր համար պարզում է՝ ինչ կարող է ինքն անել և ինչ չի կարող, ինչն է իր մոտ ամենից լավ ստացվում, իսկ ինչը՝ ոչ: Նա կարիք չունի մյուսների հետ համեմատվելու. երեխան տեսնում է իր աճն ու զարգացումը և տալիս ճիշտ ինքնագնահատական: Խաղերը բազմաթիվ են ու բազմազան: Սակայն խաղերի ճիշտ ընտրության ու կազմակերպման դեպքում դրական արդյունք կունենան թե՛ երեխաները , թե՛ նրանց հետ աշխատող մեծահասակները...

Ես փորձել եմ խաղի միջոցով հետազոտել առաջին դասարանցիներին մաթեմատիկայի դասին, գտնել հնարներ զարգացնելու ճանաչողական հետաքրքրությունները :Ընտրել եմ մաթեմատիկայի « Մեծ,փոքր» « Մեկ ,շատ» թեմաները: Օգտագործել եմ ճանաչողական գործունեությունը զարգացնող խաղեր, որոնք նպաստեցին էլ ավելի հետաքրքիր դարձնել դասը: Աշխատանքի հիմնական նպատակն է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ զարգացնել մաթեմատիկական ունակությունները, ինքնուրույնությունը, տրամաբանությունը, ամրապնդել երեխայի հիշողությունը, կատարելագործել երևակայությունը:

Գրական ակնարկ

Խաղի մանկավարժական նշանակությունը ընդգծել և հետաքրքիր ու օգտակար մտքեր են արտահայտել Յա. Ա. Կոմենսկին, Ժ.-Ժ. Ռուսոն, Կ. Ուշինսկին,Ա. Մակարենկոն, Յա. Կորչակը և շատ ուրիշներ: Խաղի դաստիարակչական և ճանաչողական նշանակության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հոգեբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, արվեստագետներ, որոնք հիանալի գիտեն երեխայի ներաշխարհը: Դասի ժամանակ ճանաչողական պահանջմունք առաջացնել՝ նշանակում է ստեղծել պրոբլեմային իրադրություն: Աշակերտին պրոբլեմի լուծման պրոցեսի մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է նաև պրոբլեմի հստակ սահմանումը, նրա ձևակերպումը, իսկ այնուհետև, վարկածների առաջքաշում՝ դրանց ստուգում ու հիմնավորում: Ոչ միայն ստեղծագործական, այլև ինքնուրույն մտածողության զարգացումը պահանջում է պարապմունքների այնպիսի կազմակերպում, երբ գիտելիքները տրվում են ոչ թե պատրաստի վիճակում, այլ մեծ մասամբ աշակերտները դրանք ձեռք են բերում ինքնուրույնաբար : Ես էլ իմ 2 դասի ընթացքում անցկացրել եմ «Հետևի՛ր և կատարի՛ր» խաղը , որը երեխաներին շատ դուր եկավ , մեծ ոգևորություն ու ուրախություն այն պատճառեց երեխաներին : Կարծում եմ որքան դասը համեմենք տարբեր խաղերով , այնքան դասն ավելի հետաքրքիր ու դյուրին կլինի աշակերտների համար:

Խաղի մասին ասել են…

«Մանկական խաղերի պարզությունը խաբուսիկ է, այս երևույթը բոլորը գիտեն, բայց ոչ բոլորն են ըմբռնում: Խաղի և զարգացման հարաբերությունը հավասարազոր է ուսուցման զարգացման նկատմամբ ունեցած հարաբերությանը»: Վիգոդսկի

«Խաղն իր մեջ ընդգրկում է ինքնագործունեության կառուցվածքի բաղադրամասեր»: Էյնշտեյն

«Խաղը չպետք է անհետ հեռանա երեխայի կյանքից, պետք է շարունակի մնալ թե դպրոցական ուսուցման, թե աշխատանքի գործընթացներում»: Վիգոդսկի

«Առանց խաղի չկա և չի կարող լինել ամբողջական մտավոր զարգացում: Խաղը մի մեծ , լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգևոր աշխարհը , կյանքը լցնում է պնդումների, գաղափարների հոսքով: Խաղը կայծ է՝ հարցասիրության և հետաքրքրասիրության վառվող կրակ»: Վ.Ա. Սուխոմլինսկի

«Խաղը պետք է այնպես կազմակերպվի, որ նրա իրականացման ժամանակ կանխազգացվի ապագա դասը»: Հենսել

«Երեխայի խաղերը պետք է կանխատեսեն ապագայի լուրջ պարապմունքները»: Արիստոտել

Խաղը, որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց ։

Ժամանակակից դասերը չպետք է միօրինակ լինեն: Յուրաքանչյուր դաս մանկավարժական ուրույն ստեղծագործություն է և չի կարող կրկնվել նույնությամբ: Մեր առաջնահերթ խնդիրն է՝ դասը դարձնել բազմաբնույթ ու գրավիչ ։

Ուսումնական նյութի յուրացման մակարդակը զգալի չափով կախված է ուսուցման ընթացքում տեղեկատվության տարբեր աղբյուրների՝ խոսքի ու զննական միջոցների ճիշտ զուգակցումից: Տարրական դասարաններում որպես տեղեկատվության աղբյուրներ համեմատաբար շատ պետք է օգտագործել առարկայակերպարային զննական միջոցները՝ բնական առարկաներ, նկարներ, ծավալային ձևանմուշներ և այլն ։ Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Ուսուցման նպատակի նման ընկալումը չափազանց արդիական է և միաժամանակ ունի շատ խոր և հին արմատներ: Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույ- նություն, ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն: Որն էլ պիտի հիմք հանդիսանա երեխայի «ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը: Այս տարիքից պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի համարձակ ստեղծագործական ու երևակայական, ուշադրության ու մտածողության կարողությունները ։ Այս տարիքում երեխաները հիմնականում ընկալում են զգայարանների միջոցով, ուստի կարելի է կազմակերպել այնպիսի խաղեր, որոնք կլինեն տեսողական, զգայական, դիդակտիկ: Շփվելով կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ, մենք մեր առջև դնում ենք այսպիսի մանկավարժական խնդիրներ.

1. Երեխան խաղալով հասկանում է ինքն իրեն, ճանաչում է իրեն շրջապատող աշխարհը, գիտելիք է ձեռք բերում ամենատարբեր հարցերի շուրջ:

2. Հստակ խնդիրներ և նպատակներ ունեն, հատկապես մտավոր խաղերը. Զարգացնելերեխաների հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, քանի որ առանց այդ հատկանիշների անհնար է երեխային ամբողջովին զարգացնել:

Խաղը երեխայի մտավոր զարգացման առաջնահերթ միջոցներից է: Այն երեխային մղում է անցնելու զարգացման մի աստիճանից մյուսը,այսինքն նորածնի զգայական ընկալումներից դեպի նախադպրոցականի մինչգործնական և ապա տարրական դպրոցի երեխային հատուկ գործնական մտածողության: Խաղը նպաստում է ճանաչողական ունակությունների զարգացմանը: Այն միաժամանակ ֆիզիկական, զգացմունքային և սոցիալական որակների ձևավորման կարևորագույն գործոն է: Ահա ինչու երեխայի

նախաձեռնած երևակայակենտրոն խաղը պետք է ընթանա ուսուցչի աջակցությամբ, որը վերածվելու է զարգացմանը համապատասխանող գործելակերպի: Խաղն իրենից ներկայացնում է իրական գործունեություն: Երևակայականն այն իրադրությունն է, որն ստեղծվում է խաղի ժամանակ (նստած են վագոնի մեջ, բայց վագոն չկա): Խաղի ընթացքում է ձևավորվում սիմվոլային (նշանային) գործառույթը (իրական առարկաների փոխարինումը խորհրդանիշերով): Օրինակ, որպես ձի երեխան օգտագործում է փայտաձողը, որպես գնացք խորանարդիկը: Եվ գլխավորն այն է, որ արտաքին իրական փոխարինողների օգտագործմամբ կատարվում են ներքին փոխարինումներ: Այդ երնույթն էլ վերափոխում է երեխաների հոգեկան բոլոր գործընթացները, թույլ տալիս մտովի պատկերացնել առարկաները: Այսպես, խաղալիս նա մի քանի րոպեում«թռչում է տիեզերք և վերադառնում», վիրահատում է ծանր հիվանդին», «հաղթահարում ծովի հսկա ալիքները»:Խաղի կարևոր նշանակությունն այն է, որ երեխան հանդես է գալիս այլ մարդու դերակատարմամբ, և աշխարհին նայում կարծես թե մեծահասակի տեսանկյունից: Երեխան իր շրջապատի երևույթներըտեղափոխում է խաղային իրավիճակ: Նա, այնուամենայնիվ, հայելային ձևով չի վերարտադրում, այլ ներմուծում է ինքնուրույն տարրեր, այսինքն՝ ստեղծագործում է, երևակայում: Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի համար առաջատար գործունեություն է սկսում դառնալ ուսումը: Բայց այդ դպրոցականը, որը դեռ երեկ տարված էր իր զվարթ խաղերով, չի կարող լիովին զերծ մնալ դրանցից: Այդ իսկ պատճառով, երբ ուսուցումը համեմվում է խաղերով դրանք երեխայի համար դառնում են ավելիհետաքրքիր, սրտամոտ և ցանկալի: Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է մի նոր յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ -աշակերտ կամ աշակերտ աշակերտ հարաբերություններում մինչև այդ գոյություն ունեին ինչ- ինչ խանգարող հանգամանքներ, ապա դրանք աննկատելիորեն անհետանում են: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտները անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը: Խաղն ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է իր համար էլ աննկատելիորեն ընդգրկել ակտիվ ուսուցման և նույնիսկ այս կամ այն խնդրի լուծման ընթացքի մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝ տարվելով հետաքրքրաշարժությամբ, և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը: Խաղի հիմնական հոգեբանական հատկություններից մեկն այն է, որ շոշափվում են երեխայի անձնավորության բոլոր որակները. նրա մեջ աշխուժորեն աշխատում է միտքը, հարստանում են հույզերը, պահանջվում են հատուկ գործունեություն և կամային ջանքեր: խաղը՝ գործունեություն է, ուր հաղթահարվում են երեխայի անմիջական հույզերը, ցանկությունները: Եվ նա սովորում է գործել ոչ թե վայրկենական հույզերի կամ ցանկությունների ազդեցությամբ, այլ առաջիկա գործունեության իրադրության թելադրանքով: Ահա ինչու խաղը նոր պահանջմունքների դպրոց է: Այստեղ երեխան հույզերի միջոցով կանխազգում է ապագայում հասարակական արժեք և գնահատում ունեցող լուրջ գործունեության ուրախությունը:Այդ իսկ ձևով խաղը երեխաներին նախապատրաստում է դպրոցական ուսուցմանը, նպաստում անհրաժեշտ դիրքորոշման ձևավորմանը, օգնում կատարելու կամավոր ստանձնած

պարտականությունները և ենթարկվելու կանոններին: Խաղը կարող է ծառայել երեխաների դաստիարակության և զարգացման բարդ

խնդրի իրագործմանը միայն այն դեպքում, երբ այն ներառվում է կազմակերպվող

մանկավարժական գործընթացի մեջ : Այսպես, օրինակ, առաջին դասարանցին տառուսուցման կամ էլ թվերի ուսուցման ժամանակ ծանոթանում է մի այնպիսի տառի կամ թվի, որն ունի բերան, աչիկներ ու թաթիկներ, խոսում է երեխաների հետ և պատմում իր մասին: Երեխաները սեղմում են նրա թաթիկը, բարևում և խոստանում չնեղացնել և չմոռանալ նրան: Փաստորեն երեխաները հաղորդակցվում են տվյալ տառի կամ թվի հետ, որից հետո, երբ տարբեր նյութերից պատրաստում են իրենց «նոր բարեկամին», ապա հեշտությամբ և հաճույքով մտապահում են նոր տառը կամ էլ թիվը: Այդ դեպքում յուրացումն իրականանում է գրեթե ինքնըստինքյան:

Հ Հ Դպրոցում կենդանի մանկավարժական գործընթացում խաղերը չեն կարող ինքնանպատակ լինել: Խաղը պետք է հանդես գա ոչ թե որպես առանձին հնար, այլ միաձույլ լինի ուսուցմանը և ծառայի ուսումնական նպատակին: Հարկավոր է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրների լուծմանը: Ինչպես ցանկացած հնար, ուսումնական տեխնոլոգիա, այնպես էլ հետաքրքրաշարժության տարրերով հարուստ խաղը կարող է նույնիսկ ձանձրացնել երեխաներին, եթե չփոփոխվի ու անընդհատ կրկնվի նույնությամբ: Այդ իսկ պատճառով խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Ցանկացած խաղ ցանկալի է տեսնել ոչ թե անխախտ կաղապարի, այլ աստիճանական զարգացման մեջ, որպեսզի երեխայի մեջ չկորչի հետաքրքրությունը թե՛ դրա և թե՛ ուսուցան նկատմամբ : Եթե խաղը ճիշտ չի ընտրված, ապա չի շարժի աշակերտների հետաքրքրությունը: Եվ այս դեպքում չի գրանցվի անհրաժեշտ արդյունք : Խաղին հատուկ կարևորություն է տրվում վաղ դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիրակության գործում, քանի որ, ըստ հոգեբանների, այդ տարիքն առանձնանում է որպես անհատա-կանության ձևավորման առաջին աստիճան: Այդ տարիքում խաղն է անձի ձևավորման կարևորագույն միջոցը, գործոնը: Ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները: Կարևոր է նաև այս ամենի դաստիրակչական կողմը, քանի որ այդ ընթացքում երեխաները մոտիկից առնչվում են, մրցակցում, վիճում, իրար օգնում, դառնում են ինքնուրույն և ընկերասեր: Մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման համակարգում խաղի դերին և ուսուցումը խաղի օգնությամբ կազմակերպելուն: Խաղի ընթացքում մեծ տեղ պետք է հատկացնել հետաքրքրաշարժ խնդիրներին ու առաջադրանքներին, որոնց հիմնական նպատակը սովորածը կրկնելու, ամրապնդելու և կիրառելու կարողությունների ձևավորումն է: Բազմազան մանկավարժական, տրամաբանական, հետաքրքրաշարժ վարժությունները

երեխաներըկատարում են սիրով ու հափշտակությամբ: Նրանք ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ լուծում են, վճռում, գտնում, կազմում, հորինում, առանձնացնում և այլն: Իսկ այդ ընթացքում երեխաները կամա-ակամա սովորում են այն ամենը, ինչը ծրագրված և թաքնված է այդ առաջադրանքների հետևում: Խաղերը միայն դասը հետաքրքրաշարժ, զվարճալի ու բազմերանգ դարձնելու համար չեն միայն, դրանք առաջին հերթին ուսանելի են և նոր գիտելիքներ են հաղորդում, սովորեցնում միտքը լարել, տրամաբանել: Խաղերը զարգացնում են երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, համակցված մտածողությունը: Ուսուցման գործընթացը բխում է միայն երեխայի շահերից և հարմարեցված է նրա կարիքներին: Երեխան խաղային բոլոր գործընթացներում ցուցաբերում է ակտիվություն: Խաղերը բազմազան են՝ աշխույժ, մարզական, ճանաչողական, սյուժետադերային, սեղանի, զարգացնող, խաղ-մրցույթներ, խաղ-էստաֆետներ, խաղ-երևակայական իրավիճակներ, տրամաբանություն և կամք զարգացնող, ուշադրություն կենտրոնացնող, հիշողություն ամրացնող, կատակ-խաղեր ,շարժական խաղեր, դիդակտիկ խաղեր և այլն :

Հենց այդ նպատակով էլ տարրական դասարաններում (հատկապես՝ առաջին) հարկավոր է ավելի շատ կազմակերպել ուսուցողական խաղեր: Ուսուցիչը պետք է իմանա, որ խաղի բովանդակությունը և կանոնները պետք է հասկանալի լինեն երեխաներին, խաղի

բովանդակությունը պետք է համապատասխանի աշակերտների գիտելիքների մակարդակին, խաղերը պետք է լինեն կոնկրետ և նպատակային, իսկ դրանց քանակն ու տևողությունը՝ չափավոր: Խաղը պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը: Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատա-ռելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է նրա բնավորության շատ կողմեր: Խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել: Խաղի ընթացքում երեխան դրսևորում է որոշակի ինքնուրույնություն, ձգտում է ինքնահաստատման, ձևավորվում են բնավորության որոշակի գծեր:

Խաղի ընթացքում երեխաները ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հասակակիցների հետ փոխշփումներ, հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ:

Դասի տարբեր փուլերում անցկացվող խաղերի տեսակներից կարելի է առանձնացնել այն ուսուցողական խաղերը, որոնք համապատասխանում են դասի թեմային և կազմակերպվում են առանձին թեմաների ուսուցումը նախապատրաստելու, անցածը խորացնելու, ամրապնդելու և ամփոփելու նպատակով: Երկրորդ դասարանում մայրենի լեզվի դասաժամերին իրականացվող բառակազմական և վերլուծական-գործնական աշխատանքները, որոնք կազմակերպվում են խաղերի ձևով, նպաստում են սովորողների՝ հայրենիքի ճանաչողության խորացմանը և լեզվական աշխատանք կատարելու հմտությունների ձևավորմանը: Երեխաներն աստիճանաբար կարողանում են պարզ բառերից կազմել բարդ և բարդաձանցավոր, ինչպես նաև հոդակապով և անհոդակապ բառեր: Այդ կարողություններն առավել զարգացնելու նպատակահարմար միջոց են

հաճախակի կազմակերպվող բառավերլուծական բնույթի մի շարք խաղեր, որոնց ժամանակ աշակերտներն առիթ են ունենում ընտրելու արմատը կամ ածանցը: Դասավանդման և դաստիարակության ժամանակ է, որ առաջանում են բազմաթիվ խնդիրներ, և տարրական դասարանների ուսուցիչն է,որ ուսուցման մեթոդաբանության, մանկավարժական վարպետության և ճկունության շնորհիվ կամաց-կամաց փոխում է երեխայի հետ աշխատելու բնույթը՝ ավելի շատ ուշադրություն դարձնելով նրա և՛ անձնային, և՛ իմացական հնարավորությունների զարգացմանը : Մինչդեռ նպատակային ուսուցում կազմակերպելու համար տարրական դասարանների ուսուցիչը պետք է հետամուտ լինի սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը , համագործակցային կարողությունների զարգացմանը, հաղորդակցական ունակությունների, անհատականության, տրամաբանական մտածողության,վերլուծական կարողությունների ձևավորմանը: Խաղը երեխայի համակողմանի զարգացման,ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է երեխայի բնավորության բոլոր կողմերը : Խաղն օգնում է ուսուցման գործընթացում բազմաթիվ նպատակների իրականացմանը: Լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական բնույթի, կարգապահության, հաղորդակցման, միմյանց լսելու կարողության և համագործակցության զարգացման հետ կապված բազմաթիվ խնդիրներ:

Ամփոփելով վերն ասվածը՝ կարելի է ասել, որ ուսուցողական խաղերի միջոցով հնարավոր է ձևավորել և զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները, մասնավորապես հաշվողական և լեզվական հմտությունները: Խաղերն օգնում են ուսուցչին առավել մատչելի տարբերակով ներկայացնելու դասի թեմատիկան՝ ձևավորելով երեխայի երևակայելու, զգացմունքներն ու գործողությունները ինքնուրույն կարգավորելու ունակությունները:

Այսպիսով՝ թեմատիկ խաղերի կարևոր նշանակությունն է խորացնել կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունները, դասը դարձնել առավել հետաքրքիր, անսովոր և ցանկալի, զարգացնել երեխայի ուսումնառության դրդապատճառները, բարձրացնել աշխատունակությունը:

Փորձարարական հետազոտություն

Դասապրոցեսում խաղը որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև ակտիվացնում է երեխաներին: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում: Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի ու խաղի, այլ պարզապես խաղը տարրալուծել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ ու խաղի միջոցով:

Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: Երեխային հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները: Խաղային իրավիճակներում երեխան դառնում է առավել գործուն և ուշադիր: Խաղերը հաճախ տեղեկատվական բնույթ են կրում: Խաղի ընթացքում երեխան կարողանում է ազատ մտածել տվյալ հարցի շուրջ: Քննարկման փուլում նա լսում է ուրիշների կարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ: Ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու:

Արդյունքում երեխան ինքնավստահություն է ձեռք բերում և զարգացնում զննողականությունը : Երեխաները հեշտությամբ են ներգրավվում խաղային գործունեության ոլորտ, և ինչքան այն բազմազան է, այնքան ավելի գրավիչ է դառնում: Մանկավարժական պրակտիկան ցույց է տալիս, որ ինչ նպատակով էլ խաղն ընտրված լինի և որքանով էլ այն ապահովված լինի անհրաժեշտ պարագաներով, ուսուցիչն է այն կարևոր դերակատարը, առանց որի խաղը կարող է ոչ միայն պարզապես ժամանց դառնալ, այլ նաև ունենալ հակադարձ ազդեցություն: Ուսուցիչը խաղի ժամանակ չպետք է հանդես գա երեխաներից ոչ մի կողմի խաղախմբի հետ:Ուսուցիչը բոլորովին հավասար խաղընկեր է, խորհրդատու կամ օգնական: Ուսուցիչը ինքը պիտի լրջորեն վերաբերվի խաղի կանոնների պահպանմանը, ձևավորելով նաև երեխաների խաղի կանոններին համապատասխան գործունակությունները: Պիտի կարևորի և բարձր գնահատի երեխաների մասնակցությանը խաղին, որքան հնարավոր է սահմանափակելով դիտողությունները և քննադատական ակնարկները: Ուսուցիչը պիտի խաղի ժամանակ կարևորի և բարձր գնահատի բոլոր երեխաների ցանկությունները, մասնավորապես դերային խաղերի ժամանակ չկատարի պարտադրողական քայլեր: Խաղային թիմերը ձևավորելիս պիտի այնպես անի , որ նույն խմբի մեջ մտնեն տարբեր խառնված և պատրաստակամություն ունեցող երեխաներ:Պարտվող թիմերին պիտի տա իրենց պարտության պատճառները որոշելու և այդ մասին դատողություններ անելու հնարավորություն:Պիտի օգնի երեխաներին որոշելու, թե ուսումնական որ նյութի իմացության կամ չիմացութունն է խաղում պարտվելու պատճառը, որ կարողանան բացահայտել հաղթելու կարողությունը: Խաղը պիտի բավականություն և հրճվանք պարգևի ոչ միայն հաղթող, այլ նաև պարտվող խմբին: Դրա համար բավական չէ խաղի

ընթացքի ճիշտ կազմակերպումը, անհրաժեշտ է նաև մանկավարժահոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպել արդյունքների ամփոփումը, գովասանքի և խրախուսանքի խոսքեր ասելով ոչ միայն այն խմբին, որ առաջինն և ճիշտ կատարեցին առաջադրանքի կատարումը, այլև նրանց, ովքեր վերջինն ավարտեցին, սակայն արդյունավետ կատարեցին: Ցանկացած խաղ պիտի նպաստի մանկական կոլեկտիվի և համերաշխության համագործակցությանը, ընկերական առողջ, հանդուրժողական հարաբերությանը, և եթե խաղի ավարտից հետո մասնակիցները շարունակում են ինչ-որ մի բան պարզաբանել, վիճել, խռովել իրարից,ավելին թշնամանալ, նշանակում է խաղի ընթացքում ինչ-որ բան այնպես չի եղել, և խաղը չի ծառայել իր նպատակին:

Խմբի նկարագիր

Հետազոտոկան աշխատանքս իրականացրել Այրքի միջնակարգ դպրոցի առաջին դասարանում:Դասարանը կազմված է 10 աշակերտից:Նրանցից 6-ը տղաներ են,իսկ 4-ը՝ աղջիկներ:Ունենք դասին մասնակից և ակտիվ և պասիվ աշակերտներ:

Հետազոտության ընթացք

<u>Փորձարարական դաս 1</u>

Իմ անցկացրած առաջին դասի թեման – Մեծ , փոքր Խաղ «Հետևի'ր և կատարի'ր»

Դասիս նպատակն էր՝ զարգացնել ուշադրության տեղափոխման ունակությունը: Ընթացքը: Անվանում եմ մի քանի բառ՝ «աթոռ»,«մահճակալ»,«մատիտ», «տետր», «գիրք», «ագռավ», «ծիրան», «պատառաքաղ» և այլն: Ըստ նախնական պայմա-նավորվածության՝ երեխան պետք է արձագանքի որոշակի խմբի կամ խմբերի (կենդանի, կահույք, բույս, ուտելիք, միրգ) պատկանող բառերը լսելիս: Օրինակ՝ ասում եմ .«Այժմ ես կթվեմ բառեր, դուք պետք է ուշադիր լսեք: Երբ որևէ մրգի անուն լսեք, ծափ կտաք»:

Դասարանում սովորում է 10 երեխա.

Առաջին անգամ խաղն անցկացնելուց հետո արդյունքը եղավ.

Թերություններ չունեցա	Որոշակի թերություններ	Սխալները շատ էին
4 աշակերտ	4 աշակերտ	2 աշակերտ

Վերլուծելով արդյունքներ

Պարզեցի , որ 2 աշակերտ անսխալ կատարեցին ,որովհետև ցանկացած աշխատանք կատարում են շատ ուշադիր և հասկանալով: Չնայած 4 աշակերտներ հասկացել էին խաղը , բայց ունեցան որոշակի թերություններ, որովհետև ուշադրության պակաս կար: Իսկ 4 աշակերտներ շատ սխալներ թույլ տվեցին: Խաղը կրկնել մի քանի անգամ,ավելի լավ յուրացնելու համար:

Փորձարարական դաս 2

Երկրորդ դասիս թեման է-Մեկ, շատ Խաղ «Հետևի'ր և կատարի'ր»

Նպատակը - զարգացնել ուշադրության տեղափոխման ունակությունը: Երբ երեխաները յուրացնում են առաջին հրահանգը, խաղը կարելի է աստիճանաբար բարդացնել,

որպեսզի նրանք չձանձրանան:

Երկրորդ հրահանգի դեպքում կարելի է երեխային առաջարկել, որ կանգնի այն ժամանակ, երբ լսի բույսերի անուններ:

Խաղը աստիճանաբար բարդացնելուց հետո, արդյունքը կլինի.

Թերություններ չունեցան	Որոշակի թերություններ ունեցան	Սխալներ շատ էին
5 աշակերտ	3 աշակերտ	1 աշակերտ

Վերլուծելով արդյունքները

պարզեցի , որ 5 աշակերտ անսխալ կատարեցին , որովհետև այս անգամ ավելի ուշադիր էին խաղում: Չնայած 3 աշակերտներ հասկացել էին խաղը , բայց ունեցան որոշակի թերություններ, որովհետև ուշադրության պակաս կար: Իսկ 1 աշակերտ ,որը փորձում էր ուշադիր խաղալ, շատ սխալներ թույլ տվեց:

Խաղը կրկնել մի քանի անգամ,ավելի լավ յուրացնելու համար:

Արդյունքների ամփոփում և վերլուծություն

Դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ուսումնական գործընթացները ավելի արդյունավետ է կազմակերպել դիդակտիկ խաղերի միջոցով: Ուստի ես էլ իմ դասապրոցում առանձնացրել եմ այնպիսի խաղ, որը զարգացրեց երեխաների ուշադրության տեղափոխման ունակությունը , բավարարեց, շարժվելու պահանջմունքը, զարգացրեց ճանաչողական հետաքրքրությունը: Կարող եմ փաստել,որ երկու դասերի ընթացքում էլ մեծ էր աշակերտներից հետաքրքրությունը, և իսկապես խաղերի միջոցով ես կարողացա, նրանց ինտեգրել դասին: Դասապրոցում օգտագործելով նման խաղեր՝ կարծում եմ կմեծանա երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ:

Եզրակացություն

Մանկավարժ Յանոշ Կորչակը երեխայի մանկությունը համեմատում էր այն լեռների հետ, որոնցից սկիզբ են առնում բոլոր հորդահոս գետերը, որոշում իրենց հունը և ուղղությունը: Մանկության ընթացքով են պայմանավորված հասուն կյանքում մարդու բոլոր հաջողություններն ու անհաջողությունները: Ուսումնասիրություններից պարզվում է, որ առանց երջանիկ, լիարժեք և պաշտպանված մանկության՝ խաթարված է մարդու ամբողջ կյանքը» : Խաղը ուսուցման միջոց է, որը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: կարող է փոխել նախկին հնացած պատկերացումները դասի անցկացման վերաբերյալ :Դասի ժամանակ խաղերն անցկացվում են աշակերտական մեծ ու փոքր խմբերով՝ ուսուցչի ղեկավարությամբ, որոնց անցկացման նպատակն է հին նյութի և աշակերտներին հանձնարարվող նոր թեմայի ավելի արդյունավետ կերպով յուրացումը:Միաժամանակ, ըստ Ի.Կազժյուսի ՝ , խաղերի մեջ պետք է ներգրավվել ոչ միայն թույլ, այլև ուժեղ աշակերտ-ներին: Միշտ պետք է հիշենք, որ ուսուցչի կարևորագույն պարտականությունը կյանքի կորովի խթանումն է Ա. Ս. Մակարենկոյի արտահայտությամբ՝ խաղը երեխայի աշխատանքն է, բայց ուրախալի աշխատանքը, որը նրան մեծ բավականություն է պատճառում: Նշանավոր մանկավարժի կարծիքով ինչպես երեխաները խաղում են, այնպես էլ աշխատելու են: Խաղը երեխայի ամբողջ կյանքի իմաստն է : Երեխան խաղալով է անցնում իր վաղվա չափահաս կյանքի դպրոցը:Այլ կերպ խաղը մարդու զարգացումն է և իքնակատարելագործումը : Երեխաները գործուն էակներ են , և անհրաժեշտ է կազմակերպված միջավայր ստեղծել նրանց համարի: Չի կարելի կասկածել երեխայի ունակություններին և ընդունակություններին: Համոզված եմ՝ որ հետագայում երեխաները դեռ շատ անգամ աշխարհը կզարմացնեն իրենց ընդունակություններով: Լավատեսորեն հավատում եմ՝ Տիեզերքն իրոք անսահման է, և երեխան այդ անսահմանության անկրկնելի տիպարն է : Եթե մանկավարժը ստեղծագործական վերաբերմունք է դրսևորում նրա նկատմամբ ,ապա երեխայի ընդունակությունները սահմաններ չեն ճանաչում:

Օգտագործված գրականություն

1.Սյու Բրեդեկամփ Մինչն ութ տարեկան երեխաների զարգացմանը համապատասխանող գործելակերպի մշակումը վաղ մանկական ծրագրերի շրջանակներում»:

2. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կիև , 1969

3. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Հ--2. եր. 1959:

4. Ս. Վարադումյան և ուրիշներ, «Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին: գործիմաց մոտեցում, տեսություն և պրակտիկա» ձեռ նարկ ուսուցիչների համար: Երևան 2004 Այրեքս

5. Л. Понкратова, Игра в жизни ребенка.

6. Б. Александрова, Игра и жизнь.

7. А. Усова, Роль в игры в организации жизни и деятельности детей. Д. Эльконин, Психология игры.

8. Вайнер М. Э. Игра и эмоциональное развитие младших школьников //- Начальная школа: плюс—минус. 2001, Ко 4.

9. Варданян Е. Психология игры, М.: 1978.

10. Волина В. В. Учимся играя. М.: Новая школа, 1994